ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կարիքների համար գնումների www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով մարդատար ավտոմեքենաների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀԿԿ-ԳՀԱՊՁԲ-Մ-21/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի

ք. Երևան 16.12.2021թ. ժամը 11:00

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 16.12.2021թ. ժամը 11:00-ին, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Վ.Վաղարշյան 13ա հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Վ. Հակոբյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ս. Նազարյանը, Ա. Հակոբյանը, Ա. Պոչիկյանը, Մ. Հովհաննիսյանը և նիստի քարտուղար՝ Ս. Ղազարյանը:

«ՀԿԿ-ԳՀԱՊՁԲ-Մ-21/2» ծածկագրով մարդատար ավտոմեքենաների ձեռքբերման նպատավով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստը հրավիրվել է սույն թվականի դեկտեմբերի 16-ին ժամը 11:00-ին Վաղարշյան 13ա հասցեում, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի վարչական շենքում :

Ընդունել ի գիտություն, որ «ՀԿԿ-ԳՀԱՊՁԲ-Մ-21/2» ծածկագրով ընթացակարգի հայտերը բացումը նախատեսվել էր www.armeps.am գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 17.12.2021թ ժամը 10:00-ին:

1.Տեղեկություններ
գնման ընթացակարգի արտահերթ նիստ հրավիրելու վերաբերյալ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կարիքների համար «ՀԿԿ-ԳՀԱՊՁԲ-Մ-21/2» ծածկագրով հրապարակված գնանշման հարցման ընթացակարգի շրջնակներում գնման առարկայի պայմանագրի նախագծին կից տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ձեռքբերվող «Մարդատար ավտոմեքենա» գնման առարկայի բնութագրում առկա կոնկրետ չափորոշիչների պահանջը փոփոխելու, ինչպես նաև հնարավոր մասնակիցների համար մրցակցության հավասար պայմաններ ապահովելու նպատակով հանձնաժողովը որոշեց հրավիրել «ՀԿԿ-ԳՀԱՊՁԲ-Մ-21/2» ծածկագրով ընթացակարգի արտահերթ նիստ:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ- 0:

2. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարած հարցումների մասին

2.1 Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ չեն եղել:

2.2 Հայտերի վերաբերյալ ներկայացվել է հարցում սույն թվականի դեկտեմբերի 11-ին, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից տրամադրվել է պարզաբանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի պահանջներին համաձայն:

3. Տեղեկություններ կայացրած որոշումների վերաբերյալ

Գնահատող հանձնաժողովը կայացրեց որոշում «ՀԿԿ-ԳՀԱՊՁԲ-Մ-21/2» ծածկագրով գնման ընթացակարգը լուծարելու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ- 0:

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- Վ. Հակոբյան

Հանձնաժողովի անդամներ՝

---------- Ս. Նազարյան,

---------- Մ.Հովհաննիսյան

---------- Ա. Պոչիկյան

---------- Ա.Հակոբյան

Նիստի քարտուղար,

գնումների բաժնի պետ՝ ---------- Ս.Ղազարյան